

Շենավան համայնքի ղեկավարի II կիսամյակի կատարված աշխատանքների վերաբերյալ:

II կիսամյակի տվյալներով համայնքի 2012թ. բյուջեն ըստ եկամտատեսակների կատարվել է հետևյալ կերպ:

- ա/ հողի հարկ գանձվել է 10411.1 հազար դրամ
- բ/ գույքահարկ գանձվել է 1310.0 հազար դրամ
- գ/ վարձակալական հողի վարձ գանձվել է 1378.4 հազար դրամ
- դ/ պետության կողմից տրված դոտացիա 9586.4 հազար դրամ
- Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝
- ա/ նախորդ տարիների աշխատավարձ՝ 0 հազար դրամ
- բ/ սոց վճար՝ 2500.0 հազար դրամ պարտք 289.8 հազար դրամ
- գ/ ընդհանուր բնույթի ծախսեր և ծառայությունների ձեռք բերում 11128.2 հազար դրամ
- 2012թվականին աշխատավարձի ընթացիկ տարվա պարտքեր գոյացել 637.0 հազար դրամ:
- Համայնքի գանձապետական հաշիվները գտնվել են արգելանքի տակ, որի արդյունքում բյուջեի եկամուտները պակասել են 4243.5 հազար դրամով:
- Համայնքի ղեկավարի սեփական նախաձեռնությամբ կատարվել է՝
- ա/ հուշարձանի հարակից այգու մաքրման աշխատանքներ
- բ/ փողոցների աղբահանում
- գ/ պարբերաբար մասնակի վերանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցը:
- Համայնքում առկա են հետևյալ հիմնախնդիրները որոնց լուծման համար անհրաժեշտ են հավաքագրել սեփական եկամուտները
- 1/ խիստ անհրաժեշտ է հիմնովին վերանորոգել խմելու ջրի ներքին ցանցը որը շահագործման է
- հանձնվել 1966թվականին և գտնվում է անմխիթար վիճակում:
- 2/ մշակույթի տան հիմնանորոգում
- 3/ համայնքի ընդհանուր գազաֆիկացում
- 4/ մանկապարտեզի վերանորոգում

ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝





15.01.2013թ. Շենավան համայնքի ղեկավարի հաշվետու ժողովից

15.01.2013թվականին տեղի ունեցավ Շենավան համայնքի ղեկավարի 2012թ. տարեկան կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում, ժողովին մասնակցում էին մոտ 41 մարդ՝ ավագանու անդամներ, բուժ աշխատողներ, գյուղապետարանի և դպրոցի աշխատակիցներ, ինչպես նաև համայնքի ակտիվ բնակիչներ: Հաշվետու ժողովին ներկա էր Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ Ա. Հովհաննիսյանը:

Գյուղապետ՝ Ա. Մկրտչյանի կողմից համայնքի բնակիչներին ներկայացվեց համայնքում կատարված աշխատանքները՝ ճանապարհների մաքրման ու բարեկարգման, ջրամատակարարման, ինչպես նաև համայնքի զարգացման սոցիալ. տնտեսական բնույթի այլ հարցեր.

Համայնքի ղեկավարը նշեց որ ավարտվել և շահագործման է հանձնվել 4 փողոցի զագաֆիկացումը: 2012թ. ընթացքում հավաքագրված սեփական եկամուտների չափը զգալիորեն գերազանցում է 2011թվականի արդյունքները:

2012թ. ընթացքում սեփական եկամուտները հավաքագրվել են հետևյալ կերպ՝  
ա/ հողի հարկ 15300.4 դրամի դիմաց հավաքագրվել է 10411.1 դրամ  
բ/ գույքահարկ 1813.0 դրամի դիմաց հավաքագրվել է 1310.0 դրամ  
գ/ հողի վարձավճար 1700.0 դրամի դիմաց հավաքագրվել է 1384.4 դրամ  
դ/ պետության կողմից տրվել է դոտացիա 9586.4 դրամ

Ծախսային մասը կատարվել է հետևյալ կերպ՝  
ա/ նախորդ տարիների պարտքի մարում 0 դրամ

բ/ սոց վճարների մարում 2500.0 դրամ պարտք 289.8

գ/ ընդհանուր բնույթի ծախսեր և ծառայություններ 11128.2 դրամ



2012 թվականի ընթացքում աշխատավարձի պարտք գոյացել է 637.0դրամ:

Համայնքի գանձապետական հաշիվները գտնվել է արգելանքի տակ, որի արդյունքում բյուջեի եկամուտները պակասել է 4243.5 դրամով:

Համայնքի ղեկավարը բնակիչներին տեղեկացրեց որ համայնքում առկա հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն սեփական եկամուտների հավաքագրմամբ որի վրա խիստ ուշադրություն է դարձնելու և լինելու է հետևողական:

Համայնքում առկա են հետևյալ հիմնախնդիրները

- 1/ խմելաջրի ներքին ցանցի հիմնանորոգում
- 2/ մշակույթի տան հիմնանորոգում
- 3/ համայնքի ընդհանուր զագաֆիկացում
- 4/ մանկապարտեզի վերանորոգում:

Հաշվետու ժողովի նախագահ՝  Ա. Մկրտչյան  
 քարտուղար՝  Յ. Առաքելյան

